որում ոչ բերէ վնաս առողջութեան բանտ արկեալ անձանց։

ԳԼՈՒԽ ՃԽԹ.

Բանտն քրէական ըստ արժանի գործոյն մեղաւորաց։

ԳԼՈՒԽ ՃԾ.

Ամենայն չորս եղանակս տարւոյն եղիցի դատաստան քրէական մեղաց ընդ ամենայն իշխանութիւնս հայոց սրբեսցի բանտն վճռաւ ըստ Օրինաց։

ԳԼՈՒԽ ՃԾԱ.

Ամենայն գանգատող և դատախազ որում գոցի անպարտ, և կամ անիրաւութեամբ և նենգութեամբ գանգատեցեալ և ընդիմացեալ պարտէ մեղաւորն հատուցանել ծախն երկուց կողմից լեալ 'ի դրունս դատաստանի և վնասն կորուսանելոյ ժամանակին արդարոյն։

ԳԼՈՒԽ ՃԾԲ.

Ամենայն ոք 'ի ձեռագործ իրաց աշխարհէն հայոց ազատապէս կարէ հանիլ առ 'ի տարբ յաշխարհ վասն վաճառականութեան, բայց զէն և գործիք ձեռաց զամենայն զոր ինչ ոսկոյ և երծաթոյ և գործիք պատերազմի արգելեալ լիցի։